

ԿԱՐՍԻՔ

Նարեկ Գագիկի Սուրբայանի՝ «Եղիշե Զարենցը և 20-րդ դարասկզբի
համաշխարհային գրական զարգացումները» թեմայով (Ժ.01.02-«Նորագույն
շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ) թեկնածուական
ատենախոսության մասին

Ե. Զարենցը հայ բազմադարյա գրականության այն բացառիկ երևույթներից է, որոնց ստեղծագործությունները ժամանակի հետ բացվում են իրենց նոր կողմերով, ի հայտ բերում նորանոր բազում շերտեր, համաշխարհային գրականության, գեղագիտության ու փիլիսոփայության հետ առնչության նոր եզրեր, որոնք և, բնականաբար, պահանջում են գրականագիտական նոր մոտեցումներ, բազմակողմանի վերլուծության ու համակարգման նոր մեթոդներ ու եղանակներ:

Ն. Սուրբայանի թեկնածուական ներկա ատենախոսությունը յուրօրինակ մի փորձ է՝ համաշխարհային գրականության զարգացման ընդհանուր համապատկերի վրա քննելու մեծ բանաստեղծի ստեղծագործությունները և, ժամանակի գրական հոսանքներին զուգահեռ նորովի բացահայտելու նրա դերը 20-րդ դարի հայ պոեզիայի զարգացման պատմության մեջ,

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործած գրականության ցանկից:

Առաջին տպավորությամբ՝ ատենախոսության հեղինակն ակնհայտորեն տեղեկացված է խնդրո առարկա ժամանակաշրջանի գրական հոսանքների, մասնավորապես սիմվոլիզմի, ֆուտուրիզմի և մոդեռնիզմի առանցքային խնդիրներին ու դրանց առընթեր՝ ինչպես Զարենցի, այնպես էլ՝ ոուս և եվրոպական մի շարք հեղինակների կարևորագույն ստեղծագործություններին, վերջիններիս առնչությամբ՝ գրաքննադատական տեսակետներին և այլն:

Պետք է ասել, սակայն, որ, այս ամենով հանդերձ, աշխատանքն իր ամբողջության մեջ չի ենթարկվել գիտակառուցվածքային անհրաժեշտ համակարգման, առաջադրված խնդիրների հիմնարար ուսումնասիրման ու գիտական պատշաճ մակարդակով վերլուծությունների ու տեսական

ընդհանրացումների, ինչի արդյունքում և՝ աշխատանքն իր ամբողջության մեջ չի ապահովել գիտական պահանջվող չափորոշիչները:

Առաջին ակնառու բացթողումներից մեկը ատենախոսության վերնագրի («Եղիշե Զարենցը և 20-րդ դարասկզբի համաշխարհային գրական զարգացումները ») և նրա տակ շարադրված ամբողջական նյութի բովանդակային մասնակի անհամաձայնությունն է, այստեղից բխող՝ գիտամեթոդական վրիպումներով ու ակնհայտ շեղումներով, որոնց հետևանքով և՝ ատենախոսությունն իր կառուցվածքաբովանդակային ընդհանուր պլանում չի հասել անհրաժեշտ համակարգման: Այսպես, օրինակ, վերնագիրը ենթադրում է Ե. Զարենցի բանաստեղծական առանցքային դիմագծի, նրա գրական ժառանգության առավել բազմաշերտ ու հիմնարար արժեքների ուսումնասիրությունը, վերլուծություններն ու գնահատումը հիշյալ ժամանակաշրջանի համաշխարհային գրականության զարգացման ընդհանուր համապատկերի վրա: Այսինչ ատենախոսը, անհասկանալի տրամաբանությամբ, Զարենցի պոեզիան դիտարկել է միայն սիմվոլիզմի, ֆուտուրիզմի և մոդեռնիզմի գուգահեռների վրա՝ այն դեպքում, եթե բանաստեղծի գրական ժառանգությունը և, առհասարակ, 20-րդ դարի համաշխարհային գրականությունը չեն սահմանափակվում սուկ հիշյալ գրական հոսանքներով: Զարենցի հարուստ ու բազմաշերտ պոեզիայում կարելի է տեսնել ժամանակի բոլոր այն նշանակալի գրական հոսանքները (էքզիստենցիալիզմ, էքսպրեսիոնիզմ, դադաիզմ և այլն), որոնք յուրովի մաս են կազմում մոդեռնիզմի՝ իրենց վրա կրելով այս կամ այն ժամանակահատվածում մարդու և, առհասարակ, քաղաքակրթության զարգացման տիպաբանական որոշակի առանձնահատկությունները: Իսկ եթե ատենախոսը նպատակ է ունեցել քննության առնել Զարենցի՝ միայն այս հոսանքներին (սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, մոդեռնիզմ) հարող երկերը, ապա դա պետք է հստակորեն արտահայտվեր ատենախոսության վերնագրում:

Ներածության մեջ Ն. Սուքիասյանը փորձել է դիտել անցյալ դարասկզբի համաշխարհային գրական զարգացումների հետ Զարենցի ունեցած համակողմանի առնչությունները և, ինչպես ինքն է ասում. « Ցույց տալ, որ Ե. Զարենցի ստեղծագործությունների վրա սիմվոլիզմի, ֆուտուրիզմի և մոդեռնիզմի

թողած ազդեցությունն այնքանով եղավ կարևոր և նշանակալից, որքանով պահանջում էր դարաշրջանը. ինչպես ժամանակի «գործառությի » տարբնկալման, այդպես էլ՝ բանաստեղծական կառույցի « նախօրինակի» և գեղագիտական կոմտրոշման չափորոշիչների ճշգրտման տեսանկյունից» (Էջ 11): Այս և մի շարք այլ ձևակերպումներում շարադրանքի տրամաբանական կապի նմանատիպ խճողումներով հեղինակը գիտականորեն չի հիմնավորում հիշյալ հոսանքների և համաշխարհային հնչեղություն ունեցող դրանց ներկայացուցիչների հետ հայ մեծ բանաստեղծի ստեղծագործական կապը, տեքստերի գրաֆիկական վերլուծությունների միջոցով՝ վերջինիս տիպաբանական խնդիրներն ու առանձնահատկությունները, այլ փոխարենը, ինչպես ներածարանում, այնպես էլ բոլոր երեք գլուխներում առատորեն հնչեցնում է համաշխարհային ճանաչում ունեցող հեղինակների անուններ, որոնք ոչ միշտ են առնչվում խնդրո առարկա նյութի հետ, իսկ առնչվելու հազվագյուտ դեպքերում էլ գիտական պատշաճ քննություն չեն բռնում գրական ազդեցությունների ու գուգահեռների ուսումնասիրման գրականագիտական համապատասխան տիրույթներում: Ինչպես գրական ազդեցությունների, այնպես էլ շատ հազվադեպ հանդիպող տեսական ու գուգահեռների ապրիորի մեկնություններում, բանաձևումներում հեղինակը չի հաջողում գիտականորեն տեսքի բերել ասելիքը, ինչը և անխուսափելիորեն հանգում է մտքի տրամաբանական աճշտության՝ առանց ի մի բերվելու ընկալման որևէ գիտական հարթության մեջ: Ահավասիկ մի օրինակ «Ներածություն » բաժնից. «Գրականության զարգացումը շրնդիատվող անսահմանափակություն է և բնական պետք է դիտվի, որ այն անկախ հասարակական իրադարձությունների զարգացումներից մտնի առաջընթացի մի նոր շրջափուլ՝ իր առջև դնելով նորանոր գերխնդիրներ ու նպատակներ »(Էջ 15): Նախ՝ ի՞նչ է նշանակում « Գրականության զարգացումը շրնդիատվող անսահմանափակություն է» արտահայտությունը: Կամ ինչո՞ւ և ինչպե՞ս պետք է բնական դիտվի այն, որ գրականությունը կարող է առաջընթացի նոր շրջափուլ մտնել՝ անկախ հասարակական իրադարձությունների զարգացումներից, հատկապես՝ գրապատմական այն ժամանակաշրջանն ու ուսումնասիրման առարկա գրական հոսանքները, որոնց պատմագեղագիտական առանձնահատկությունները հիմնականում

պայմանավորված են հասարակական-պատմական իրադարձություններով և դրանց հետընթաց՝ անհատի հոգեմտավոր ձեւաչափի փոփոխություններով:

Առաջին գլուխը («Եղիշե Չարենցը և սիմվոլիզմը») իր հերթին բաժանված է երեք ենթագլուխների («Կորուսյալ երազի անհայտ ուղիներով», «Ասպետական» ռապսոդիայի «փոթորկածուփ» միատերիա», «Չարենցյան սիմվոլիստական գույնների «նրբագծերն ու նրբերանգները»), որոնց բոլորի վերնագրերն ել, կարելի է ասել, ունեն գիտական ոչ պատշաճ ձեակերպում:

Ատենախոսության այս գլխում բնագրերի ընթերցման, ստեղծագործական առնչությունների ու դրանց գիտական վերլուծությունների մեթոդաբանությունը ճանաչողական նոր տարածքներ սկզբունքորեն չեն ապահովում: Բանաստեղծական մեջբերվող հատվածները, շատ հաճախ դառնում են ինքնանպատակ՝ ոչ միշտ կապ ունենալով իրենց նախորդ և հաջորդ մեկնությունների իմաստային բովանդակության հետ, ինչը, ի դեպ, կարելի է ասել նաև գրաքննադատների, փիլիսոփաների, մշակութաբանների՝ ատենախոսության մեջ չափից ավելի տեղ գտած մեջբերումների մասին, որոնք երբեմն նույնիսկ զավեշտալի բնույթ են կրում: 27-րդ եջում, օրինակ, խոսելով Չարենցի հոգեոր տվյալանքների ու մղձավանջների, բանաստեղծի՝ երազային աշխարհում հայտնվելու ներքին մղումների մասին, Սուրբիայանն իր խոսքը փորձում է հիմնավորել Զ. Ֆրոյդից կատարված մեջբերմամբ, որտեղ մեծ հոգեվերլուծաբանը բնության է առնում ոչ թե բանաստեղծական երազային աշխարհը, այլ մարդու՝ զիշերվա տեսած երազը՝ որպես ենթագիտակցական երևոյթ, որոնք լրիվ տարբեր հասկացություններ են և որևէ կերպ չեն կարող փոխլրացնել միմյանց: Չարենցի և սիմվոլիստների կապը շատ դեպքերում չի հիմնավորվում բանաստեղծական՝ իմաստաբովանդակային գուգահեռներ ունեցող կոնկրետ օրինակներով և դրանց բազմակողմանի գուգահեռների գրաքննադատական դիտարկումներով: Փոխարենը հանդիպում ենք այնպիսի ձեակերպումների, ու առանձին բառակապակցությունների, ինչպիսիք են, օրինակ «Պատրանքի ձշմարտապատում»(էջ 28), «Գեղարվեստագետի ստեղծագործող հատկանիշ »(էջ 29) և այլն: Իսկ մի շարք դեպքերում ել, փորձերով Չարենցի ստեղծագործական առնչությունները տեսնել այլ գրողների ու փիլիսոփաների երկերում, ատենախոսը

պարզապես մերկապարանց հայտարարություններ է անում՝ դարձյալ առանց կոնկրետ օրինակների ու գիտական ընդհանրացումների: 29-րդ էջում, օրինակ, կարդում ենք. «Ե.Չարենցի բանաստեղծություններում մարմնի և հոգու փոխկապակցվածության հարցերը քննվում են Շոպենհաուերի՝ դուալիզմի («երկվություն») փիլիսոփայական հիմքի վրա»: Այսպիսի բաները հենց այնպես չեն ասվում. նմանատիպ պատասխանատու ձևակերպումները միանշանակ:

պետք է ուղեկցվեն համապատասխան օրինակներով, գիտական խոր և բազմակողմանի վերլուծություններով և այլն:

Ինչ վերաբերում է գրական հոսանքների վերաբերյալ ատենախոսի պատկերացումներին՝ պետք է ասել, որ դրանք դասագրքային մեկնաբանություններից ու ակադեմիական հայտնի տեղեկատվություններից այն կողմ չեն անցնում: Գրական ուղղությունների, հոսանքների ու դպրոցների բնութագրական, գիտամեթոդական առանձնահատկությունների ու տիպաբանական խնդիրների ուսումնասիրություններն, ի վերջո, չեն կարող լուծումներ գտնել սույն մանիֆեստների և կամ ինչ-ինչ հոչակագրերի ակադեմիական տիրույթներում. նրանց տարածաժամանակային ընդգրկվածության առանցքում մարդն է՝ պատմահասարակական, սոցիալ-քաղաքական, հոգևոր-մշակութային և նման այլ իրողություններով պայմանավորված իր հոգեմտավոր կառույցով, արտաքին աշխարհի հետ հարաբերությունների էներգետիկ ներքին ուղղվածությամբ, իրերի ու երևույթների ընկալման իր ձևաչափով, պատճառներով ու հետևանքներով և այլն: Հետևաբար, գրական ուղղությունների ու հոսանքների մասին խոսելուն զուգահեռ, անշուշտ, պետք է նկատի ունենալ այս կարևոր հանգամանքը, ինչի՝ ատենախոսության մեջ առկայության դեպքում, հնարավորություն կստեղծվեր նրա հեղինակի ինտելիկտուալ պատրաստվածության, գրական – հասարակագիտական իմացության ու աշխարհայացքի ընդգրկման և առհասարակ, հոգեմտավոր դիրքի վերաբերյալ պատկերացումներ կազմել միանգամայն այլ հարթություններում ու այլ դիտանկյուններից՝ դրանից բխող մի շաբթ հետևանքներով: Այնինչ ատենախոսը, անդրադառնալով իր կողմից ուսումնասիրվող գրական հոսանքներին, վերջիններիս ներկայացուցիչների հետ Չարենցի ունեցած

գեղարվեստական առնչություններին՝ քննության առարկա է դարձնում մեծավայրական այն ստեղծագործություններն ու բանաստեղծական առանձին հատվածները, որոնց մակերեսի վրա վիզուալ պլանում երևում են սույն համանման մոտիվներն ու տրամադրությունները կամ, ինչպես ինքն է ասում. «Վկայում են նրանց քննարկական հուզաշաղախ պատկերների համանման նկարագրությունների մասին»(էջ 35):

Գրաքննադատական մեկնության նմանատիպ օրինակների հաճախակի կարելի է հանդիպել ուսումնասիրության մեջ, որոնցից մեկն էլ, ահավասիկ՝ 41-րդ էջում.«Ա. Բլոկի հայրենասիրական քնարի ընդուռ դողանջները, - գրում է ատենախոսը, - լսելի են ինչպես Վ. Տերյանի, այնպես էլ՝ Ե. Չարենցի բանաստեղծություններում, ինչը հայրենիքի նկատմամբ տածած նույն սիրո և վերաբերմունքի արդյունքն է»(Այստեղ ավելորս չէ հիշել այն Ճշմարտությունը, որ գեղարվեստի մասին խոսել գեղարվեստի՝ լեզվով՝ կնշանակի ոչինչ չասել):

Ինչպես գիտենք, ժամանակակից գրականագիտությունը պահանջում է նոր մտածողություն, իրերն ու երևույթների քննության առնելու նոր հայացք ու դիտանկյուն, որոնք էլ, իրենց հերթին, ենթադրում են բանաձևուների նոր լեզու, նոր մեթոդներ ու արտահայտչանակներ: Ինչպես՝ կարելի , օրինակ, խոսել Ա. Բլոկի, Բ. Պաստեռնակի, Թ. Էլիոթի, Ռ.Ս.Ռիլկեի, Օ.Ռուալդի, Ֆ.Կաֆկայի, Ե. Չարենցի և նման այլ ինտելեկտուալների մասին և դրան գուգահեռ կատարել տեսական այնպիսի ընդհանրացումներ, ինչպիսիք են, օրինակ. « Բանաստեղծը արտահայտում է հայրենիքի նկատմամբ բնորոշող հույզերի, չիրականացված հույսերի ու այրող կարոտի այն վառ զգացողությունները, որոնք համահունչ են սիմվոլիզմի փիլիսոփայական աշխարհընկալմանը»(էջ 46): Այսօրինակ ձևակերպումները գուցե կարող են հարիր լինել ծայրամասային դպրոցների գրականության ֆակուլտատիվ պարապմունքներին, բայց ոչ բնավ՝ թեկնածուական ատենախոսությունը ներկայացվող զիտական արդի պահանջներին ու շափորոշիչներին:

Ատենախոսության երկրորդ գլուխը (« Ե. Չարենցը և ֆուտուրիզմը»), ի տարբերություն մյուս երկու գլուխների, փոքք՝ ինչ հաջողված է այն առումով, որ այստեղ համեմատաբար առարկայական է խոսվում Ֆուտուրիզմի հետ Չարենցի

ունեցած առնչությունների մասին, բանաստեղծական մեջբերվող հատվածները երբեմն ճիշտ ու տեղին են ընտրված, համեմատաբար ծանրաբեռնված չէ անունների ինքնանպատակ թվարկումներով և ալն: Ասվածքսակայն, չի ենթադրում, որ ատենախոսության այս հատվածը զերծ է թերություններից: Բոլոր այն հազվագյուտ դեպքերում, եթե ատենախոսը փորձում է տեսական որևէ ընդհանրացում կատարել՝ անմիջապես հայտնվում է գիտական ապարատի բացակայությամբ պայմանավորված տրամաբանական անկանոնության տեսադաշտում, ինչը և խոսում է նրա ընդհանուր պատրաստվածության աստիճանի, գեղարվեստական երկի ընթերցման, գիտական վերլուծության ու համակարգման ոչ բավարար կարողությունների ու հմտությունների մասին: Այնինչ տեսական գիտելիքները, բանաձևումների ճշգրտության աստիճանը, իրերի ու երևույթների մտավոր ընդգրկման սահմաններն ու ձևաչափը շատ բան կարող են ասել գրականագետի հասարակագիտական ունակությունների և, առհասարակ, ինտելեկտուալ մակարդակի մասին: Այսպես, օրինակ, խոսելով գրական գործընթացների զարգացման մասին, Սուրբիայանը գրում է.« Գրական-ստեղծագործական տրնաժան գործընթացը, հիրավի, դադարներ չհանդուրժող անընդհատական մի շարժում է և բնական է, որ պայմանավորված լինելով հասարակական-քաղաքական տարաբնույթ հանգամանքներով, այն պետք է մտնի առաջընթացի նոր հունի մեջ»(էջ 57): Տեսական գիտելիքների և ունակությունների այսօրինակ կողմնորոշիչները մեկ այլ տեղ արտահայտվում են հետևյալ ձևակերպումներով.«Բանաստեղծի հոգեկան աշխարհը կապվում է ժողովրդական հոծ զանգվածների հոգեկան աշխարհի հետ »(էջ 59) և կամ «Նշված գործերում, ինչպես նաև ապագայում գրված գործերում նկատելի է շարժման այն պաթոսը, որ արգասիք էր տիրապետող հսկա ալեկոծումների »(նույն էջում):

Միևնույն ժամանակ, ինչպես նշեցինք վերևում, ատենախոսության այս զիսում որոշ դիպուկ համեմատություններ ու գուգահեռներ կան, ինչպիսիք են, օրինակ, ֆուտուրիստների՝ Ու. Ռիթմենի բանաստեղծական օրինակով ինքնասեռումների, չարենցյան անհատի և Նիցշեի գերմարդու առնչությունների դիտարկումները, որոնք, թեկուզ հպանցիկ, այնուամենայնիվ, տեղին են նկատված և, որոշ առումով, բնութագրական են հիշյալ դեպքերի համար (էջ 66): Բայց քիչ

անց, դարձյալ տեսական իր ոչ բավարար ունակությունների պատճառով, ատենախոսը չի հապաղում՝ փշացնելու նախորդ էջում ստացած քիչ թե շատ դրական տպագրությունը. «Ֆուտուրիստական գործերում,- զրում է նա, - տողերի « անջատվածությունն» ու «հատվածայնությունը »պայմանավորված են նրանցում արտահայտվող տարածագման արդի փոխհարաբերություններով» (Եջ 67): Ընկալման որևէ տիրույթում չեն տեղափորվում նաև առանձին այնպիսի նախադասություններ, ինչպիսիք են, օրինակ.«Ականակիտ վազրով սլանում եր ահա ժամանակը »(Եջ 85)և այլն:

Հանուն արդարության՝ պետք է նաև նշել, որ, այս գլխի վերջնամասում, ատենախոսը տեղին է նկատել Չարենցի՝ այդ շրջանում դասական պոեզիան ժխտելու և հետագայում իր տեսակետներն այս առնչությամբ շտկելու հանգամանքը և այդ համատեքստում հիշել Տերյանին նվիրված նրա բանաստեղծությունը:

Ատենախոսության երրորդ գլխի («Չարենցը և մոդեռնիզմը ») առաջին իսկ էջերում հեղինակը դարձյալ ու զրեթե ինքնանպատակ հիշում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի եվրոպական գրականության մեծերին, շատ հաճախ ուղղակի թվարկում նրանց առավել հայտնի ստեղծագործություններն ու առաջ անցնում: Երբեմն էլ մի քանի նախադասությամբ վերապատմում է Օ. Ռուստի, Կաֆկայի և այլոց ստեղծագործությունները՝ առանց անհրաժեշտ կրակումներ կատարելու և այդ ամենը ծառայեցնելու խնդրո առարկա նյութի առավել լիարժեք ուսումնասիրմանը: Միևնույն ժամանակ անհասկանալի է մնում, թե հեղինակից հեղինակ և ստեղծագործությունից ստեղծագործություն կտրուկ անցումներ կատարելով, ատենախոսի, կարելի է ասել, թե հատկապես ո՞ր և կամ ինչպիսի եզրահանգմանն էր միտված այս կամ այն գրապատմական շրջայցը, ինչպիսի և կամ ինչքան՞ով է նպաստում այդ հեղինակների թվարկումները իր առջև դրված խնդրի լուծմանը և այն: Նույն սկզբունքներով, օրինակ, նա կարող է խոսել Կաֆկայի « Դատավարություն»-ից և ապա Զ. Խալաֆյանի «Եվ վերադարձնելով ձեր դիմանկարը »վեպից, թվարկել Վահագն Գրիգորյանի արձակ գործերը, հաջորդ տողում խոսել Շառլ Բողլերի պոսեզիայից: Եվ այդպես շարունակ:

Այս գլխի առաջին ենթագլխում, որը վերնագրված է «Զների ու ոճերի բազմազանությունը և պոետիկան», »գրեթե հիմնարար ոչինչ չի խոսվում Չարենցի պոեզիայի կառուցվածքային խնդիրների ու առանձնահատկությունների մասին՝ բացառությամբ մեկ երկու դեպքերի, այն է՝ հիմնականում գույների խորհրդանիշների ու առանց՝ գիտական խոր ու բազմաշերտ վերլուծությունների ու մեկնությունների։ Այնինչ պոետիկան մեծ և միաժամանակ կոնկրետ հասկացություն է, որը քննության շատ առավել ընդգրկուն տարածություն է ակնկալում։

Իսկ ահա երրորդ ենթագլուխը («Ե. Չարենց և Գ. Լորկա.գրական փոխազդեցություններ») ակամա հարց ետաղադրում ինչո՞ւ հատկապես Չարենցը և Լորկան։ Այդ ի՞նչ ընդգրկված առնչություն ունի հայ բանաստեղծի հետ Գարսիա Լորկան, որ աշխատանքում հիշատակված տասնյակ անուններից առանձնացել և ուսումնասիրության նյութ է հանդիսացել առանձին ենթագլխով։ Եթե խոսքը այս երկու բանաստեղծների անհատական ճակատագրերի մասին է, ապա Լորիկան այս առումով միակ գուգահեռը չէ Չարենցի հետ. հակառակ դեպքում՝ պետք է գիտականորեն հիմնավորվեր այս ամսներ և այս երկու բանաստեղծների ստեղծագործությունների բազմաշերտության մեջ ընդգծվերն այն իմաստ առանձնահատուկ և խորքային կապերի ու առնչությունները, որոնք հնարավոր չեն տեսնել Չարենցի և մեկ այլ ուրիշ բանաստեղծի պարագայում։ Իսկ ահա թե ինչպես է հիմնավորում այս երկու պոետների կապը ատենախոս։ «Ե. Չարենցի և Գ. Լորկայի և շարք ստեղծագործություններում արտացոլված հայրենիքի և նրա հանդեպ կարոտի թեմաներն արտահայտվել են գեղարվեստական խոսքի տարատեսակ սիմվոլներով և ունեն արդիական հնչեղություն։ Ե. Չարենցի և Գ. Լորկայի հայացքները կարենոր ազդակ են հանդիսանում ապագայի պոեզիայի մեջ նոր ուղիներ բացելու և զարգացնելու առումով» (էջ 117)։ Կարծում ենք՝ ավելորդ է ասել, որ նմանօրինակ ընդհանրական դատողություններով բնակ չի հիմնավորվում Չարենց - Լորկա ընդգծված կապը, ավելին, այս նույնը կարելի է ասել Չարենցի և շատ ուրիշ հեղինակների առնչությամբ, ինչը չի կարող անհրաժեշտ քննության բոնել գրական գուգահեռների պահանջվել չափորոշիչներում։

Բնշնէ: Ընդհանրացնելով Նարեկ Սուրբիայանի՝ «Եղիշե Չարենցը և 20-րդ դարասկզբի համաշխարհային գրական գարզացումները » թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ մեր կարծիքը՝ եկանք այն եզրակացության, որ ատենախոսուն ունի գրականագիտական որոշակի տվյալներ, մասնակիորեն տեղյակ է խնդրո առարկա գրական հոսանքների ընդհանուր խնդիրներին, այդ հոսանքներին հարող՝ Ե. Չարենցի առանցքային ստեղծագործություններին: Այսքանով հանդերձ, սակայն, ատենախոսի մոտ բացակայում է գրանագիտական նոր մտածողությունն ու դրանով պայմանավորված մի շարք կարևոր երևույթներ, հատկապես՝ գեղարվեստական երկի խոր ու բազմաշերտ ընթերցումն ու գիտական պատշաճ մակարդակով վերլուծություններ կատարելու ունակությունները, գրական ազդեցություններն ու գուգահեռները՝ գրաքննադատական պահանջվող չափորոշիչներով ուսումնասիրելու համապատասխան փորձն ու գիտելիքները, տեսական բանաձևումներ կատարելու հմտություններն ու կարողությունները, այս ամենը գիտականորեն համադրելու և համակարգելու որակական անհրաժեշտ հատկանիշները և այլն:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ մեր եզրակացությունը ներկա ատենախոսության վերաբերյալ բացասական է, հետևաբար գտնում ենք, որ նրա հեղինակն արժանի չէ իր հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին

Պաշտոնական ընդդիմախոս՝ բ.գ.դ., դոցենտ՝

17.04.2023թ.



Սուսայելյան